

վաճառք» (Փաւս. 55), կամ «քանչարավաճառք», եւ վերջապէս «ամենավաճառք» (Ոսկ. Թղթ. Ա, 666): Չափաւորապէս շահող ուսմկին սեղանն ուրեմն այս վաճառականաց տուած նիւթերով կը զարդարուէր: Եւ ոչ անշուշտ ուսմկին սեղանը միայն: – Ոչ միայն կերակրոյ նիւթոց, այլ ասոցմէ պատրաստուած եւ եփուած ուտելեաց վաճառորդներ, կամ արդի ոճով՝ հասարակաց ճաշարաններ ալ կային Հայոց մէջ, գէթ միջին դարուն, ուր կը յաճախէին ընտանիքէ զուրկ եւ կամ հեռի մընացած մարդիկ: Այս կարեւոր տեղեկութիւնը մեզ տուողն է Լամբրոնացին՝ հետագայ տողերով. «Որ ի վաճառարանս¹ մտանէ, տեսանէ զզանազան համադամս կերակրոցն եւ ըմպելեացն, եւ ինքն ծարաւի եւ սովեալ, ոչ ինչ օգտի ի տեսութենէն՝» եթէ չճաշակէ (Պար. 260):

Ո՛րքան բաղձալի էր գիտնալ ժողովրդական կերակրոց այն տեսակները, որ կը շինուէին բաղադրութեամբ ուտելի նիւթոց: Կարծեմ թէ դժուարին է անոնց անուններն անգամ որոնել մեր մատենագրութեան մէջ: Դիպուածի արդիւնք է Տա-

1. Այդպէս ըստ 1306ի, 1332ի եւն օրինակաց Ս. Ղազարու, զոր տպագիրը սխալմամբ շի վաճառականս» կը գրէ: